2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 19

«03» 04 2016 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 35 ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 75 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը հաստատելու մասին» N 35 և 2013 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքները հաստատելու մասին» N 75 հրամանները:

4. Մինչև սույն հրամանն ընդունված և գործող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ներքին և անհատական իրավական ակտերում՝

1) «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն» բառերը և

դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

2) «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

3) «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

4) «Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

5) «Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում քննվող գործերի բաժին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 04 2018թ.
N 19 հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչություն,
2. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչություն,
3. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
4. Պետական շահերի պաշտպանության վարչություն,
5. Հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչություն,
6. Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն,
7. Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
8. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն,
9. Միջազգային-իրավական համագործակցության վարչություն:

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 04 2018թ.
N 19 հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

1. Զինվորական կենտրոնական դատախազություն.

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1) Կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին,

2) Զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին,

3) Պետական շահերի պաշտպանության բաժին:

2. Կայազորների զինվորական դատախազություններ.

1) Երևանի կայազորի զինվորական դատախազություն,

2) Գորիսի կայազորի զինվորական դատախազություն,

3) Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազություն,

4) Լոռու կայազորի զինվորական դատախազություն,

5) Շիրակի կայազորի զինվորական դատախազություն,

6) Սևանի կայազորի զինվորական դատախազություն,

7) Թիվ 1 կայազորի զինվորական դատախազություն,

8) Թիվ 2 կայազորի զինվորական դատախազություն,

9) Թիվ 3 կայազորի զինվորական դատախազություն: